ՂԸՐՂԶՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ, ԱՆՎԱՐՁԱՀԱՏՈՒՅՑ ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՍԱԹԻԲԱԼԴԻԵՎԱ Ա.

Կիրգիզիայի առողջապահության նախարարության արյան հանրապետական կենտրոն, Բիշկեկ, Ղըրղզստան

Հանձնված է՝ 22/01/2014 թ., ընդունված է՝ 15/02/2014 թ.

«Կամավոր անվարձահատույց արյան դոնորության ազգային ծրագիր»-ը մշակված է համապատասխան ազգային մասնագետների և միջազգային կազմակերպությունների աջակցմամբ (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (WHO), Սի-Դի-Սի (CDC), «Ղըրղզստանի կարմիր մահիկ» միություն և այլ կազմակերպություններ):

Ծրագիրը ներդրվելու է 2014-2018 թթ-ի ընթացքում: Սույն ծրագիրն ապահովելու է արյան անվտանգ օգտագործում և անվարձահատույց դոնորների քանակի ավելացում:

Ծրագիրն ունի չորս իրար կապակցված ռազմավարություններ և գործունեության պլան՝ կոնկրետ քայլեր իրականացնելու համար: Այս ծրագրով նախատեսվում և ակնկալվում է կառավարության դերի բարձրացումը և, միևնույն ժամանակ, այլ գործընկերների և մասնակիցների ներդրումը:

Ծրագիրն իր չորս ռազմավարությունների միջոցով ապահովելու է համապատասխան միջավայր՝ ուղղված կամավոր, անվարձահատույց դոնորների չափաբաժնի ավելացմանն ընդհանուր արյան դոնորների մեջ, նպաստելու է անվարձահատույց դոնորության մշակույթի զարգացմանը, ստեղծելու է կայուն դոնորների ազգային շտեմարան, ապահովելու է դոնորների ծառայությունների մատուցում և խնամք:

Ծրագրի իրագործման արդյունքում ակնկալվում է մինչև 2018 թվականն անվարձահատույց դոնորների քանակը բարձրացնել մինչև 50%՝ 2013 թվականին եղած 23%-ի փոխարեն: Նախատեսվում է նաև, որ ծրագիրը համապատասխան կառույցների կողմից կենթարկվի մշտական դիտարկման և գնահատման: